Հաստատված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի 2023թ. նոյեմբերի 24-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ Ե.Մ.Մերոբյան

Հիմք՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի 26.12.2019 թ. նիստի N0 8/4 որոշմամբ հաստատված ՇՊՀ-ի «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի կանոնադրության լրամշակված տարբերակը

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) Գրադարանի (այսուհետ՝ Գրադարան) կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) սահմանում է Գրադարանի կառավարումը և գործառույթները:

1.2. Գրադարանը Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է, որը Գրադարանի ռեսուրսներին համապատասխան ուսումնական գործընթացի ու գիտական հետազոտությունների իրագործման համար տրամադրում է համապատասխան գրականություն, տեղեկատվություն, համակարգչային սարքավորումներ:

1.3. Գրադարանը Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Հիմնադրամի կանոնադրության, Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների,

ռեկտորի հրամանների, սույն Կանոնադրության և այլն:

1.4. Գրադարանի հավաքածուների հասանելիության կարգը, հիմնական ծառայությունների շարքն ու դրանց տրամադրման պայմանները որոշվում են Գրադարանից օգտվելու կանոններով:

1.5. Գրադարանն ունի երկու կնիք (կլոր և ուղղանկյունաձև):

1.6. Գրադարանի գտնվելու վայրն է ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պ. Սևակի 4

2. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Գրադարանը ղեկավարում է Գրադարանի վարիչը, ում նշանակում և պաշտոնից ազատում է Հիմնադրամի ռեկտորը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

2.2. Գրադարանի վարիչը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Շիրակի պետական համալսարանի պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարին, Հիմնադրամի ռեկտորին և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենին:

2.3.Գրադարանի վարիչի և աշխատակիցների իրավունքները, պարտականություններն ու գործառույթները սահմանվում են Հիմնադրամի ռեկտորի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերով, վերջիններիս կից պաշտոնների նկարագրերով և այլ ներքին իրավական ակտերով:

2.4. Գրադարանի աշխատակիցներն անմիջականորեն ենթակա և հաշվետու են Գրադարանի վարիչին:

2.5.Գրադարանի վարիչի բացակայության դեպքում նրա գործառույթները ժամանակավորապես կարող է իրականացնել Հիմնադրամի ռեկտորի հրամանով նշանակված անձը:

3. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Գրադարանը.

3.1. Իրականացնում է Գրադարանից օգտվողների վերաբերյալ տվյալների բազայի

ստեղծում Excel ձևաչափով (օրվա կտրվածքով),

3.2. տրամադրում է բուհի աշխատողներին և ուսանողներին համապատասխան առձեռն տպագիր հրատարակություններ (գեղարվեստական և մասնագիտական գրքեր, պարբերական հրատարակություններ, սեղմագրեր և այլ կրիչներ),

3.3. տրամադրում է բուհի աշխատողներին և ուսանողներին էլեկտրոնային նյութեր (կրիչներին տեղադրելու և էլեկտրոնային փոստերին ուղարկելու միջոցով),

3.4. ուսումնասիրում և բարձրաձայնում է Գրադարանից օգտվողների հետաքրքրություններն ու պահանջարկը,

3.5. կատարում է Գրադարանի առձեռն հավաքածուների գույքագրման, հաշվառման աշխատանքներ,

3.6. ըստ անհրաժեշտության իրականացնում է գրականության թվայնացման աշխատանքներ,

3.7. իրականացնում ու պահպանում է Գրադարանին տրամադրված նոր գրքերի, պարբերական հրատարակությունների (ամսագրեր, թերթեր և այլն) վերաբերյալ ելակետային տեղեկատվություն էլեկտրոնային գրացուցակներում,

3.8. պատրաստում է Գրադարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ,

3.9. վարում է Գրադարանից օգտվողների գրանցման քարտարանը,

3.10. իրականացնում է օգտվողների սպասարկում միջգրադարանային աբոնեմենտի օգնությամբ,

3.11. իրականացնում է Գրադարանի գրացուցակային համակարգի ստեղծում (այբբենական, կարգային և էլեկտրոնային), գրացուցակների վարում և խմբագրում,

3.12. ուսումնասիրում ու ներդնում է Հիմնադրամի գրադարանային հավաքածուների համալրման ու մշակման, ինչպես նաև գրացուցակների համակարգի ստեղծման համար այլ գրադարանների առաջավոր փորձը,

3.13. վարում է Գրադարանի առձեռն հավաքածուների հաշվառման փաստաթղթերի (Գրադարանի ֆոնդի գումարային հաշվառման գիրք, արձանագրություններ, ակտեր և այլն) և մասնագիտական ամբիոնների գրքաֆոնդի էլեկտրոնային գրացուցակները,

3.14. իրականացնում է Հիմնադրամի Արտաքին համագործակցության և հասարակայնության կապերի կենտրոնի հետ համատեղ library.shsu.am կայքում էլեկտրոնային համապատասխան գրականության ներբեռնման և տեղադրման

աշխատանքներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն կանոնադրությունը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատում է Հիմնադրամի Գիտական խորհուրդը:

4.2. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: